

եօթը քահանայ յառաջ եկած էր, ինչպէս կը գրէ ինքն Գրիգոր Վ. ինքնագիր կենսագրութեանը մէջ, զոր գրած է 1784ին իջուածք ունենալէն ետեւ ի Վենետիկ եւ յԱնքոնա մինչեւ 1789, դժուարընթեանլի գրով մը: Այս միմիակ սկզբնագիրը կը պահուի ի Կ.Պոլիս Անտոնեան Միաբանութեան դիւանը. Բարգէն Վ. Կիւլէսէրեան հրատարակեց զայն Փարիզ «Յիշատակարան» 1905—7: Գրիգորի հայրը, որ հաւանականօրէն (Տէր) Աստուածատուր կը կոչուէր, կ'ըսուէր «Պասմաճի օղու» (Սարգիս դպիր Սարաֆ Զովհաննիսեան, ձեռագիր): Գրիգոր 22 տարեկան Երուսաղեմայ վանքին միաբան ըլլալով՝ աշակերտած է Երուսաղեմի Թորոս կամ Թէոդորոս Վ. Կորգուացի (Մշեցի, Խորենացի, Ճգնազգեաց) Պատրիարքի (1752—1761 Սեպտ. 6 †): 1750ին ուխտաւորներ բերելով Երուսաղեմէն ի Կ.Պոլիս, հոս մնաց եւ Եւգոկիա նուիրակութիւն ընելով դրամն հոն շրկեց («Յիշատակարան» էջ 207): 1757ին Թորոս Պատրիարքն Երուսաղեմի զինք Կ.Պոլսոյ փոխանորդ՝ Գեօրգի անուանեց, եւ Թորոսի մահուանէն ետեւ՝ յաջորդը Կարապետ Վ. Գանձակեցի (Արեւելցի) (23 Մարտ 1762—1768 Յունուար 24 †) նոյն պաշտօնին մէջ հաստատեց զինք 14 Դեկտ. 1762 Թուակիր Թղթով (անդ, էջ 209): Գրիգոր Վ. 1758ին Կամարակապցի Մահտեսի Ալեքսանեան Պետրոս Ամիրայի եւ Ղազար Ամիրայի միջնորդութեամբ, որոնք արքունի վաճառապետ էին, յաջողեցաւ